Բրիտանական գրականություն, Արձակ, Պատմվածք, Դետեկտիվ
13+

Արթուր Քոնան Դոյլ
Կարմրահերների միությունը

Այդ անցյալ տարվա աշնանն էր: Շերլոկ Հոլմսի մոտ նստել էր ինչ-որ տարեց ջենտլմեն՝ խիստ մարմնեղ, շիկակարմիր մազերով: Ես ուզում էի ներս մտնել, բայց տեսնելով, որ երկուսն էլ տարված են խոսակցությամբ, շտապեցի հեռանալ: Սակայն Հոլմսը ինձ քարշ տվեց սենյակ ու դուռը ծածկեց ետևիցս:

— Դուք իսկը ժամանակին եք եկել, թանկագին Ուոթսն, — ասաց նա սիրալիր տոնով:

— Վախեցա խանգարեմ ձեզ: Ինձ թվաց, թե դուք զբաղված եք:

— Այո՛, զբաղված եմ ու նույնիսկ շատ:

— Ավելի լավ չէ՞ սպասեմ հարևան սենյակում:

— Ո՛չ, ո՛չ... Միստր Ուիլսն, — դիմեց նա հաստլիկին, — այս ջենտլմենը շատ անգամներ է բարեկամական օգնություն ցույց տվել ինձ իմ ամենահաջող հետազոտություններում: Չեմ կասկածում, որ և ձեր գործում ևս նա խիստ օգտակար կլինի ինձ:

Հաստլիկը մի փոքր բարձրացավ աթոռից ու գլխով արեց: Նրա փոքրիկ, ճարպակալած աչքերը հետաքրքրությամբ զննում էին ինձ:

— Նստեցեք այստեղ, բազմոցին, — ասաց Հոլմսը:

Նա ինքը նստեց բազկաթոռին և, ինչպես միշտ մտազբաղ րոպեներին, զույգ ձեռքի մատների ծայրերը միացրեց իրար:

— Թանկագին Ուոթսն, — ասաց Հոլմսը, — ես գիտեմ, որ դուք բաժանում եք իմ սերը դեպի այն ամենը, ինչը արտասովոր է, ինչը խախտում է մեր առօրյա կյանքի միօրինակությունը: Եթե դուք անսովոր դեպքեր չսիրեիք, այդպիսի եռանդով գրի չէիք սռնի իմ համեստ արկածները... ըստ որում, խղճով ասած, ձեր որոշ պատմվածքները մի փոքր գունազարդված են պատկերում իմ գործունեությունը:

— Բայց ախր ձեր արկածները միշտ էլ այնքան հետաքրքիր են թվացել ինձ, — առարկեցի ես:

— Դեռ երեկ էր, կարծեմ, ասում էի ձեզ, որ ամենահամարձակ երևակայությունն անգամ ի վիճակի չէ պատկերացնել այն արտասովոր ու տարօրինակ դեպքերը, որոնք պատահում են կյանքում:

— Իսկ ես պատասխանեցի, որ թույլ եմ տալիս կասկածելու ձեր կարծիքի ճշտությանը:

— Բայց և այնպես, դոկտոր, ստիպված պետք է լինեք խոստովանել, որ ես իրավացի եմ, այլապես զարմանալի փաստերի այնպիսի մի հեղեղ կթափեմ ձեր գլխին, որ հարկադրված կհամաձայնեք իմ հետ: Ահա թեկուզ այն պատմությունը, որը հենց նոր պատմեց միստր Ջեյբեզ Ուիլսնը: Այն տեղի է ունեցել միանգամայն հասարակ ու առօրյա իրադրության մեջ, մինչդեռ ինձ թվում է, թե ողջ կյանքիս ընթացքում դրանից ավելի հիանալի պատմություն չեմ լսել... Միստր Ուիլսն, բարի եղեք կրկնել ձեր պատմությունը: Ես այդ խնդրում եմ ոչ միայն նրա համար, որ իմ բարեկամ միստր Ուոթսնը լսի պատմության սկիզբը, այլև որպեսզի ես ինքս հնարավորին չափ ավելի լավ

ծանոթանամ ամենաչնչին մանրամասներին: Սովորաբար հենց որ սկսում են որևէ դեպք պատմել, հիշողությանս մեջ բազմաթիվ նման դեպքեր են արթնանում: Բայց այս անգամ ստիպված եմ խոստովանել, որ երբևէ նման բան չեմ լսել:

Հաստլիկ այցելուն որոշ հպարտությամբ կուրծքը դուրս ցցեց, վերարկուի ծոցագրպանից դուրս քաշեց մի կեղտոտ, ճմռթված թերթ ու բաց արեց ծնկներին: Մինչդեռ նա, վիզը դուրս գցած, աչքերն արագությամբ կհածեր հայտարարությունների սյունակների վրա, ես ուշադիր զննեցի նրան ու փորձեցի, Շերլոկ Հոլմսին ընդօրինակելով, հագուստից ու արտաքինից որոշել, թե ինչ մարդ է նա:

Դժբախտաբար, իմ դիտումները համարյա ոչ մի արդյունք չտվին: Իսկույն կարելի էր նկատել, որ մեր այցելուն ամենասովորական մանր խանութպան է՝ ինքնաբավական, բութ ու դանդաղաշարժ: Նրա տաբատը գորշ էր, վանդակավոր տոպրակի պես կախ էր ընկած: Ոչ այնքան մաքուր սև սերթուկի կոճակներն արձակ էին, իսկ մուգ ժիլետի վրա փայլում էր պղնձե ոսկեպատ ու խոշոր մի շղթա, որից իբրև բրելոկ կախված էր միջից ծակ ինչ-որ մետաղի քառանկյուն մի կտոր: Աթոռին ընկած էին նրա մաշված ցիլինդրը և գունաթափ, գորշ վերարկուն՝ թավշյա ծալծլված օձիքով: Մի խոսքով, որքան էլ զննեցի այդ մարդուն, ոչ մի ուշագրավ բան չնկատեցի, բացի բոցագույն, շիկակարմիր մազերից: Պարզ էր, որ նա խիստ շփոթված է ինչ-որ տհաճ դեպքից:

Իմ զբաղմունքը չվրիպեց Շերլոկ Հոլմսի խորաթափանց հայացքից:

— Անշուշտ, ամեն մեկին պարզ է, — ասաց նա ժպտալով, — որ մեր հյուրը մի ժամանակ զբաղվել է ֆիզիկական աշխատանքով, բռնոթի է քաշում, ֆրանկմասոն է, եղել է Չինաստանում և վերջին ամիսների ընթացքում շատ է գրել: Բացի այս ակնբախ փաստերից, ես ուրիշ բան գուշակել չեմ կարող:

Միստր Ձեյբեզ Ուիլսնը վեր թռավ բազկաթոռից և առանց ցուցամատը թերթից հեռացնելու, աչքերը չռեց բարեկամիս վրա:

— Միստր Հոլմս, այդ բոլորն ինչպե՞ս իմացաք, — հարցրեց նա: — Օրինակ, ի՞նչ գիտեք, որ ես զբաղվել եմ ֆիզիկական աշխատանքով: Ախր ճիշտ որ ես իմ կարիերան սկսել եմ իբրև նավի հյուսն:

— Իմ թանկագին սըր, ձեր ձեռքերը պատմեցին ինձ: Ձեր աջ ձեռքը մեծ է ձախից: Դուք աշխատել եք այդ ձեռքով, դրա համար էլ աջ ձեռքի մկաններն ավելի խոշոր են:

— Հապա բռնոթի քաշե՞լը, ֆրանկոմասոնությո՞ւնը...

— Ֆրանկոմասոնության մասին դժվար չէ գլխի ընկնել, քանի որ դուք, հակառակ ձեր ընկերության խիստ կանոնադրության, կրում եք աղեղի ու շրջագծի պատկերով կոճակ:

— Ա՛խ, այդպե՛ս... Ես այդ մոռացել էի: Բայց ո՞նց գլխի ընկաք, որ ես շատ եմ գրել:

— Ուրիշ ինչի մասին կարող է վկայել ձեր պսպղացող աջ թևքը և թևքի մահուդը, որ ձախ արմունկի մոտ տրորվել է փայլելու աստիճան:

— Իսկ Չինաստա՞նը:

— Միայն Չինաստանում կարող են կտել այն ձկնիկը, որ երևում է ձեր աջ նախադաստակին: Ես ուսումնասիրել եմ կտումները, նույնիսկ գիտական հոդվածներ եմ գրել դրանց մասին: Ձկան թեփը քնքուշ վարդագույն ներկելու սովորությունը հատուկ է միայն Չինաստանին: Տեսնելով ձեր ժամացույցի շղթայի չինական դրամը, ես վերջնականապես համոզվեցի, որ դուք եղել եք Չինաստանում:

Միստր Ձեյբեզ Ուիլսնը բարձրաձայն քրքջաց:

— Այ թե ի՞նչ, — ասաց նա: — Սկզբում ես կարծեցի, թե աստված գիտե ինչ դժվար է գուշակել, բայց պարզվում է, որ շատ հասարակ բան է:

— Ուրեմն, — ասաց Հոլմսը, — սկսում եմ մտածել, որ սխալ գործեցի բացատրելով, թե ինչպես հանգեցի իմ եզրակացություններին: Ինչպես հայտնի է՝ «Omne ignotum pro magnifico», և իմ համեստ փառքին կործանում է սպասում, եթե այսպես անկեղծ լինեմ: Միստր Ուիլսն, հայտարարությունը գտա՞ք:

— Գտա, — պատասխանեց նա, հաստ կարմիր մատը պահելով թերթի սյունակի կենտրոնում: — Հրես: Ամեն ինչ հենց սրանից էլ սկսվեց: Ինքներդ կարդացեք, սըր:

Ես վերցրի թերթն ու կարդացի.

Կարմրահերների միություն: Ի կատարումն հանգուցյալ Հեզեկիա Հոպկինսի կտակի (Լեբանոն, Պենսիլվանիա, ԱՄՆ), բացված է միության անդամի նոր ազատ տեղ: Առաջարկվում է աշխատավարձ՝ շաբաթական չորս ֆունտ ստեռլինգ՝ զուտ անվանական ծառայության դիմաց: Քսանմեկ տարեկանից ոչ փոքր ամեն մի կարմրահեր, որ ունի առողջ դատողություն ու զգաստ հիշողություն, կարող է պիտանի լինել այդ աշխատանքի համար: Դիմել անձամբ Դունկան Ռոսսին, երկուշաբթի օրը, ժամը տասնմեկին, միության գրասենյակ, Ֆիլտ-ստրիտ, Պոպս-կոորտ:

— Սատանան տանի, այս ի՞նչ է նշանակում, — բացականչեցի ես, երկու անգամ կարդալով արտասովոր հայտարարությունը:

Հոլմսը անձայն ծիծաղեց ու մի տեսակ ամբողջ մարմնով կուչ եկավ բազկաթոռի մեջ, իսկ դա պարզ նշան էր, որ նա մեծ բավականություն է զգում:

— Այնքան էլ աննշան հայտարարություն չէ, հը՞, ինչ կասեք, — հարցրեց նա: — Դե, միստր Ուիլսն, շարունակեցեք ձեր պատմությունը: Պատմեցեք ձեր և ձեր տան մասին, այն մասին, թե այդ հայտարարությունն ինչ դեր խաղաց ձեր կյանքում: Իսկ դուք, դոկտոր, խնդրում եմ գրեք, թե ինչ թերթ է այդ և ամսի քանիսինն է:

— «Առավոտյան քրոնիկոն»: 27 ապրիլի 1890 թվական: Ուղիղ երկու ամիս առաջ:

— Շատ լավ: Շարունակեցեք, միստր Ուիլսն:

— Ինչպես արդեն ասացի, միստր Շերլոկ Հոլմս, — խոսքը շարունակեց Ձեյբեզ Ուիլսնը, ճակատը սրբելով, — Սիտիի մոտերքում, Սեքս-Կոբուրգսկվերի վրա ես մի փոքրիկ փոխատու գանձարկղ ունեմ: Իմ գործերը առաջ էլ մի բանի նման չէին, իսկ վերջի երկու տարիները եկամուտս այնքան էր լինում, որ հազիվ էի մի կերպ ծայրը ծայրին հասցնում: Մի ժամանակ երկու օգնական էի պահում, բայց հիմա միայն մեկն է. նրան վճարելն էլ ինձ համար դժվար կլիներ, բայց նա համաձայնեց կես ռոճիկով աշխատել, որպեսզի հնարավորություն ունենա ուսումնասիրելու իմ գործը:

— Ի՞նչ է այդ պատրաստակամ պատանու անունը, — հարցրեց Շերլոկ Հոլմսը:

— Նրա անունը Վինսենթ Սպոլդինգ է և ամենևին էլ պատանի չէ: Դժվար է ասել, թե նա քանի տարեկան է: Հազիվ թե կարողանայի նրանից ավելի ճարտար օգնական ճարել: Ես շատ լավ գիտեմ, որ նա կարող էր լիովին յոլա գնալ առանց ինձ ու երկու անգամ ավելի շատ վաստակել:

Բայց քանի որ նա գոհ է, ես ինչո՞ւ պիտի նրա գլուխն այնպիսի մտքեր մտցնեմ, որոնք վնաս հասցնեն իմ շահերին:

— Իսկապես որ, ինչո՞ւ: Տեսնում եմ, որ ձեր բախտը լավ բերել է. դուք ունեք մի օգնական, որին վճարում եք ավելի քիչ, քան նույնպիսի աշխատանքի համար ուրիշները վճարում են: Մեր ժամանակներում այնքան էլ հաճախ չեն պատահում այդպիսի անշահախնդիր ծառայողներ:

— Օ՛, իմ օգնականը պակասություններ էլ ունի, — ասաց միստր Ուիլսնը: — Ես դեռ երբեք չեմ պատահել մի մարդու, որն այդպես տարվեր լուսանկարչությամբ: Աշխատանքի ժամին չրթացնում է ապարատը, հետո ծլկում է նկուղ, ոնց որ ճագարն իր բույնը, թիթեղիկները երևակելու: Նրա գլխավոր պակասությունն այդ է: Մնացած բաներում լավ աշխատող է:

— Հուսով եմ, որ նա հիմա էլ ծառայում է ձեր մոտ:

— Այո՛, սըր: Նա է, մեկ էլ տասնչորս տարեկան մի աղջիկ, որը բան-ման է պատրաստում մեզ համար ու սենյակը հավաքում: Ուրիշ մարդ չկա. ես մենակ եմ, առանց երեխաների: Մենք երեքով սուսիկ-փուսիկ ապրում ենք մեզ համար, սըր, օջախի կրակը վառ պահում ու վճարում ըստ հաշիվների՝ ահա մեր ողջ ծառայությունը... Այդ հայտարարությունը մեզ հունից հանեց, — շարունակեց միստր Ուիլսնը: — Այսօր լրացավ ութ շաբաթ այն օրից, ինչ Սպոլդինգը ներս եկավ գրասենյակ այդ թերթը ձեռքին ու ասաց.

«Միստր Ուիլսն, ես կուզեի, որ աստված ինձ շիկակարմիր ստեղծած լիներ»:

«Ինչո՞ւ, — հարցրի ես»:

«Այ, տեսեք, — ասաց նա, — Կարմրահերների միությունում նոր ազատ տեղ է բացվել: Ով այդ տեղն զբաղեցնի, վատ եկամուտ չի ունենա: Այնտեղ, հավանորեն, շատ ավելի տեղեր կան, քան թեկնածուներ: Կտակատարները գլուխ են ջարդում, չիմանալով, թե փողերն ինչ անեն: Եթե իմ մազերն ընդունակ լինեին իրենց գույնը փոխելու, ես անպայման կօգտվեի այդ շահավետ տեղից:

«Այդ ի՞նչ Կարմրահերների միություն է», — հարցրի ես:

— Բանն այն է, միստր Հոլմս, որ ես մեծ տնկալ եմ, և քանի որ հարկ չի լինում վազվզել գործի հետևից, այլ գործն ինքն է գալիս ինձ մոտ, երբեմն ես ամբողջ շաբաթներով ոտքս տնից դուրս չեմ դնում: Ահա ինչու շատ քիչ գիտեմ, թե աշխարհում ինչ է կատարվում, և միշտ ուրախ եմ նորություններ լսելու...

«Մի՞թե երբեք չեք լսել Կարմրահերների միության մասին», — հարցրեց Սպոլդինգը, աչքերը լայն չռելով:

«Երբե՛ք»:

«Այդ ինձ շատ է զարմացնում, որովհետև դուք այն մարդկանցից մեկն եք, ովքեր իրավունք ունեն գրավել այդ ազատ տեղը»:

«Իսկ դա շա՞տ եկամուտ կարող է բերել», — հարցրի ես:

«Տարեկան երկու հարյուր ֆունտ ստեռլինգից ոչ ավելի, բայց աշխատանքը չնչին է և այնպիսին, որ չի խանգարում ուզածդ գործով զբաղվելու»:

Հասկանալի է, որ ականջներս սրեցի, քանի որ վերջին ժամանակներս իմ ձեռնարկությունը շատ չնչին եկամուտ էր բերում, և տարեկան երկու հարյուր ֆունտը խիստ տեղին կլիներ:

«Պատմեցեք այն բոլորը, ինչ գիտեք այդ միության մասին», — ասացի ես:

«Ինչպես ինքներդ էլ տեսնում եք, — պատասխանեց Սպոլդինգը, ցույց տալով հայտարարությունը, — Կարմրահերների միությունում ազատ տեղ կա, ահա և հասցեն, ուր կարող եք դիմել տեղեկանքի համար, եթե ուզում եք մանրամասնություններն իմանալ: Որքան հայտնի է ինձ, այդ միությունը հիմնադրել է ամերիկացի միլիոնատեր Հեզեկիա Հոպկինսը, որը խելառի մեկն էր: Նա ինքն էլ թունդ շիկակարմիր մազեր ուներ և համակրում էր աշխարհի բոլոր կարմրահերներին: Մեռնելիս նա մի հսկայական գումար է թողել իր կտակակատարներին, ցանկություն հայտնելով գործադրել այն՝ վառ շիկակարմիր մազեր ունեցող մարդկանց վիճակը թեթևացնելու համար: Ինձ ասել են, որ այդ բախտավորներին սքանչելի աշխատավարձ են վճարում, համարյա ոչ մի աշխատանք չպահանջելով նրանցից:

«Բայց ախր կարմրահերները միլիոնավորներ են, — ասացի ես, — և ամեն մեկը կուզենա գրավել այդ ազատ տեղը»:

«Այնքան էլ շատ չեն, որքան ձեզ թվում է, — պատասխանեց նա: — Ինչպես տեսնում եք, հայտարարությունն ուղղված է միայն լոնդոնցիներին, ըստ որում միայն մեծերին: Այդ ամերիկացին ծնվել է Լոնդոնում, այստեղ է անցկացրել պատանեկությունը և կամեցել է բարերարություն անել իր հարազատ քաղաքին: Բացի դրանից, որքան լսել եմ, այն անձինք, որոնց մազերը բաց շիկակարմիր են կամ մուգ շիկակարմիր, իզուր կդիմեն միությանը, այնտեղ պահանջվում են վառ, շլացուցիչ, կրակաշիկակարմիր մազերով մարդիկ: Միստր Ուիլսն, եթե ուզում եք օգտվել այդ առաջարկից, բավական է միայն հասնեք միության գրասենյակ: Բայց իմաստ ունի՞ արդյոք, որ դուք մի քանի հարյուր ֆունտ ստեռլինգի համար կտրվեք ձեր հիմնական զբաղմունքից»:

Ինչպես ինքներդ էլ բարեհաճում եք տեսնել, ջենտլմեններ, ես խիստ գունեղ, հարուստ երանգի վառ շիկակարմիր մազեր ունեմ և ինձ թվում էր, որ եթե բանը հասներ Կարմրահերների միության, ես հավանորեն շանսեր կունենայի գրավելու ազատվող տեղը: Վինսենտ Սպոլդինգը, իբրև այդ գործում ամեն ինչից տեղյակ, կարող էր մեծ օգուտ տալ ինձ, ուստի կարգադրեցի նրան ամբողջ օրը փակել փեղկերը և ուղեկցել ինձ մինչև միության շենքը: Նա շատ ուրախացավ, որ այսօր չի աշխատելու, և մենք, գրասենյակը փակելով, քայլերս ուղղեցինք դեպի հայտարարության մեջ նշված հասցեն:

Միստր Հոլմս, ես մի այնպիսի տեսարան տեսա, որի նմանն այլևս երբեք չի վիճակվի տեսնել: Հյուսիսից, հարավից, արևելքից ու արևմուտքից հայտարարության հետքերով դեպի Սիտի էին մղվում բոլոր այն մարդիկ, որոնց մազերը թեկուզ մի փոքր շիկակարմիր երանգ ունեին: Ամբողջ Ֆլիտ-ստրիտը լցված էր կարմրահերներով, իսկ Պոպս-կոորտը նման էր նարնջավաճառի սայլակի: Երբեք մտքովս չէր անցել, որ Անգլիայում այդքան կարմրահերներ կան: Այստեղ կային շիկակարմիր գույնի բոլոր երանգները. հարդագույն, կիտրոնագույն, աղյուսագույն, իսլանդական սետտերի գույնի, լեղիի և կավի գույնի: Բայց ինչպես Սպոլդինգն էր ասում, իսկական կենդանի, վառ, հրեղեն գույնի գլուխներ քիչ կային այստեղ: Այնուամենայնիվ, տեսնելով մի այդպիսի ամբոխ, ես հուսահատվեցի: Սպոլդինգն իրեն չկորցրեց: Չգիտեմ, թե այդ ինչպես հաջողվեց նրան, բայց նա հրհրում ու առաջ էր խցկվում այնպիսի եռանդով, որ ինձ անցկացրեց բազմության միջով, և մենք շուտով հայտնվեցինք գրասենյակի աստիճանների վրա: Աստիճաններով շարժվում էր մարդկային կրկնակի մի հոսանք. ոմանք բարձրանում էին՝ լի հաճելի հույսերով, մյուսները իջնում էին արդեն հուսախաբ: Մենք խցկվում էինք առաջ և շուտով գրասենյակում էինք:

— Անչափ հետաքրքիր պատմություն է, — ասաց Հոլմսը, երբ այցելուն լռեց, որպեսզի հիշողությունը թարմացնի բռնոթի քաշելով, — խնդրեմ, շարունակեցեք:

— Գրասենյակում ոչինչ չկար, բացի մի զույգ փայտե աթոռներից ու սոճու հասարակ սեղանից, որի մոտ նստել էր ինձանից էլ կարմրահեր մի մարդուկ: Նա յուրաքանչյուր թեկնածուի հետ մի քանի խոսք էր փոխանակում, երբ նրանք մոտենում էին սեղանին, և ամեն մեկի մեջ մի որևէ պակասություն գտնում էր: Երևում է, այդ ազատ տեղը գրավելն այդքան էլ հեշտ բան չէր: Բայց երբ մենք էլ մեր հերթին սեղանին մոտեցանք, փոքրիկ մարդուկն ինձ դիմավորեց շատ ավելի

սիրալիր, քան մնացած թեկնածուներին: Հազիվ էինք ներս մտել, և նա փակեց դուռը, որպեսզի զրուցի մեզ հետ առանց կողմնակի մարդկանց:

«Սա միստր Ջեյբեզ Ուիլսնն է, — ասաց իմ օգնականը: — Նա կուզենար գրավել ազատ տեղը ձեր միությունում:

«Եվ նա լիովին արժանի է դրան, — պատասխանեց մարդուկը: — Վաղուց ես այսպիսի հիանալի մազեր չէի տեսել»:

Նա մի քայլ ետ գնաց, գլուխը թեքեց կողքի և այնքան երկար նայեց մազերիս, որ ես անհարմար զգացի: Հետո առաջ նետվեց, հափշտակեց ձեռքս և ջերմորեն շնորհավորեց ինձ:

«Իմ կողմից անարդարացի կլիներ դանդաղելը, — ասաց նա: — Սակայն հուսով եմ կներեք ինձ, եթե որոշ նախազգուշական միջոցների դիմեմ»:

Նա երկու ձեռքով ճանկեց մազերս և այնպես ձիգ տվեց, որ ես ցավից ոռնացի:

«Ձեր աչքերում արցունքներ եմ տեսնում, — ասաց նա մազերս բաց թողնելով: — Ուրեմն, ամեն ինչ կարգին է: Ներեցեք, բայց մենք ստիպված ենք զգույշ լինել, որովհետև երկու անգամ խաբել են մեզ կեղծամի օգնությամբ և մի անգամ՝ ներկի: Ես կարող եմ պատմել ձեզ այնպիսի անազնիվ արարքների մասին, որոնք զզվանք կառաջացնեին ձեր մեջ դեպի մարդիկ»:

Նա մոտեցավ լուսամուտին և կոկորդով մեկ բղավեց, որ թափուր տեղն զբաղված է: Ներքևից լսվեց հիասթափության հառաչանք, բազմությունը ցրվեց տարբեր ուղղություններով և շուտով ողջ այդ թաղում ոչ մի կարմրահեր մարդ չմնաց, բացի ինձանից և այն մարդուց, որն ինձ վարձում էր:

«Իմ անունը միստր Դունկան Ռոսս է, — ասաց նա: — Ես էլ եմ թոշակ ստանում այն ֆոնդից, որ թողել է մեզ մեր մեծահոգի բարերարը: Միստր Ուիլսն, դուք ամուսնացա՞ծ եք, ընտանիք ունե՞ք»:

Ես պատասխանեցի, որ կինս մահացել է: Նրա դեմքին երևաց վշտի արտահայտություն:

«Աստվա՜ծ իմ, — մռայլ ասաց նա: — Ախր դա շատ լուրջ արգելակ է: Որքա՜ն ցավալի է, որ դուք ամուսնացած չեք: Ֆոնդն ստեղծվել է շիկակարմիրների բազմացման ու տարածման, և ոչ թե միայն նրանց կյանքն ապահովելու համար: Ի՜նչ դժբախտություն, որ դուք ամուրի եք»:

Այդ խոսքերը լսելով, իմ դեմքը ձգվեց, միստր Հոլմս, որովհետև սկսեցի վախենալ, թե ինձ չեն վերցնի, բայց, մի քիչ մտածելուց հետո, նա ասաց, որ ամեն ինչ յոլա կգնա:

«Բոլոր մյուսների համար մենք կանոններից չէինք նահանջի, բայց այսպիսի մազեր ունեցող մարդուն կարելի է ընդառաջել: Դուք ե՞րբ կարող եք անցնել ձեր նոր պարտականությունների կատարմանը»:

«Դա մի քիչ դժվար է, քանի որ ես զբաղված եմ ուրիշ ձեռնարկության մեջ», — ասացի ես:

«Մի անհանգստացեք դրա համար, միստր Ուիլսն, — ասաց Վինսենտ Սպոլդինգը: — Այդ աշխատանքից ես առանց ձեզ էլ գլուխ կհանեմ»:

«Ո՞ր ժամերին եմ զբաղված լինելու», — հարցրի ես:

«Տասից մինչև երկուսը»:

Քանի որ փոխառու գանձարկղներում գլխավոր աշխատանքը կատարվում է երեկոները, միստր Հոլմս, հատկապես հինգշաբթի և ուրբաթ օրերը, ռոճիկի նախօրյակին, որոշեցի, որ վատ չի լինի

առավոտյան ժամերին մի բան վաստակել: Մանավանդ, որ իմ օգնականը հուսալի մարդ է և, եթե հարկավոր լինի, կարող է լիովին փոխարինել ինձ:

«Այդ ժամերն ինձ հարմար են, — ասացի ես: — Իսկ ինչքա՞ն աշխատավարձ եք վճարում»:

«Շաբաթական չորս ֆունտ»:

«Իսկ ի՞նչ աշխատանք է»:

«Զուտ անվանական»:

«Ի՞նչն եք անվանում զուտ անվանական աշխատանք»:

«Աշխատանքի համար նախատեսված ողջ ժամանակամիջոցում դուք պետք է գտնվեք մեր գրասենյակում կամ, ծայրահեղ դեպքում, այն շենքում, ուր տեղավորված է մեր գրասենյակը: Եթե թեկուզ մեկ անգամ աշխատանքի ժամին հեռանաք այստեղից, ընդմիշտ կկորցնեք ձեր տեղը: Կտակողն առանձնապես պնդում է այս կետի ճշգրիտ կատարման վրա: Կհամարվի, որ դուք մեր պահանջները չկատարեցիք, եթե աշխատանքի ժամերին թեկուզ մեկ անգամ հեռանաք գրասենյակից»:

«Եթե խոսքը վերաբերում է օրվա մեջ ընդամենը չորս ժամին, իհարկե, իմ մտքով իսկ չի անցնի գրասենյակից հեռանալ», — ասացի ես:

«Ի նկատի ունեցեք, — կրկնեց միստր Դունկան Ռոսսը, — որ հետո ոչ մի ներողություն հաշվի չենք առնի: Ո՛չ մի հիվանդություն, ո՛չ մի գործ չի կարող ծառայել իբրև արդարացում: Դուք պետք է գտնվեք գրասենյակում, այլապես կկորցնեք ձեր աշխատանքը»:

«Իսկ աշխատանքը ո՞րն է»:

«Դուք պետք է արտագրեք «Բրիտանական հանրագիտարանը»: Առաջին հատորն այս պահարանումն է: Թանաք, գրիչ, թուղթ ու ծծան ինքներդ ձեռք կբերեք, իսկ մենք կտրամադրենք միայն աթոռ ու սեղան: Կարո՞ղ եք վաղն աշխատանքի անցնել»:

«Իհարկե», — պատասխանեցի ես:

«Այդ դեպքում, ցտեսություն, միստր Ջեյբեզ Ուիլսն: Թույլ տվեք մեկ անգամ ևս շնորհավորել ձեզ, որ հաջողվեց այսպիսի լավ պաշտոն ստանալ»:

Նա գլխով արավ ինձ: Ես դուրս եկա սենյակից և օգնականիս հետ գնացի տուն, ուրախանալով, իմ անսովոր հաջողության համար: Ամբողջ օրը մտածում էի այդ դեպքի մասին և երեկոյան մի փոքր տրամադրությունս ընկավ: Մտքովս անցավ, որ այդ բոլորը պարզապես սրիկայություն է, չնայած ոչ մի կերպ չէր հաջողվում գուշակել, թե ինչ նպատակ կարող է ունենալ այդ խաղը: Անհավանական էր թվում, որ գոյություն ունի այդպիսի կտակ և որ մարդիկ համաձայն են այդքան մեծ գումարներ վճարել «Բրիտանական հանրագիտարանի» արտագրման համար: Վինսենտ Սպոլդինգն ամենայն եռանդով աշխատում էր սրտապնդել ինձ, բայց պառկելով քնելու, ես հաստատ որոշեցի հրաժարվել այդ գործից: Սակայն առավոտյան մտքովս անցավ, որ հարկավոր է գոնե, համենայն դեպս, մի անգամ գնալ այնտեղ: Մեկ պեննիի թանաք գնեցի և վերցնելով փետուրե գրիչ ու յոթ թերթ մեծ թուղթ, քայլերս ուղղեցի դեպի Պոպս-կոորտ»: Ի զարմանս իմ, այնտեղ ամեն ինչ կարգին էր: Շատ ուրախացա: Սեղանն արդեն պատրաստ էր իմ աշխատանքի համար, և միստր Դունկան Ռոսսն սպասում էր ինձ: Նա պատվիրեց սկսել «Ա» տառից և դուրս գնաց, բայց ժամանակ առ ժամանակ վերադառնում էր գրասենյակ, որ տեսնի՝ աշխատո՞ւմ եմ, թե ոչ: Ժամը երկուսին նա հրաժեշտ տվեց ինձ, գովեց, որ կարողացել եմ այդքան շատ արտագրել, և գրասենյակի դուռը փակեց իմ հետևից:

Այդպես անցնում էր օրն-օրին, միստր Հոլմս: Շաբաթ օրն իմ տերը չորս ոսկի սովերեն դրեց իմ առաջ, սեղանի վրա՝ մի շաբաթվա վարձը: Այդպես անցավ նաև երկրորդ շաբաթը, երրորդը: Ամեն առավոտ ուղիղ ժամը տասին ես գնում էի այնտեղ և ճիշտ երկուսին հեռանում: Կամաց-կամաց միստր Դունկան Ռոսսն սկսեց գրասենյակ մտնել միայն առավոտները, իսկ հետո բոլորովին դադարեց այցելել: Բայց և այնպես, հասկանալի է, որ ես սիրտ չէի անում նույնիսկ մի րոպեով դուրս գալ սենյակից, որովհետև համոզված չէի, թե նա չի գա, և չէի ուզում այդպիսի շահավետ պաշտոնը ռիսկի ենթարկել:

Անցավ ութ շաբաթ: Ես արտագրեցի Աբբայի, Արխիտեկտուրայի, Ատտիկայի վերաբերյալ հոդվածները և հուսով էի շուտով անցնել «Բ» տառին: Մեծ քանակությամբ թուղթ էր գնում, և արդեն գրածներս հազիվ էին տեղավորվում դարակի վրա: Բայց հանկարծ ամեն ինչ վերջացավ:

— Վերջացա՞վ:

— Այո, սըր: Այսօր առավոտյան: Ժամը տասին, ինչպես միշտ, գնացի աշխատանքի, բայց դուռը կողպեքով փակված էր, իսկ դռան վրա մեխով ամրացված էր ստվարաթղթի մի պաստառ: Ահա այն, ինքներդ կարդացեք:

Նա մեկնեց մեզ ծոցատետրի թերթիկի մեծության մի ստվարաթուղթ, որի վրա գրված էր.

Կարմրահերների միությունը ցրված է:

9 հոկտեմբերի 1890 թվական

Ես ու Շերլոկ Հոլմսը երկար դիտում էինք այդ կարճ գրությունը և Ջեյբեզ Ուիլսնի ընկճված դեմքը. վերջապես դեպքի ծիծաղելի կողմը մեր աչքից ծածկեց ողջ մնացյալը. մենք քրքջացինք, չկարողանալով զսպել մեզ:

— Ես այստեղ ո՛չ մի ծիծաղելի բան չեմ տեսնում, — բացականչեց մեր այցելուն, վեր թռչելով բազկաթոռից ու կարմրելով մինչև իր հրեղեն մազերի արմատները: — Եթե դուք օգնելու փոխարեն պատրաստվում եք ծիծաղել ինձ վրա, ես կդիմեմ մի ուրիշի օգնության:

— Ո՛չ, ո՛չ, — բացականչեց Հոլմսը, նորից նստեցնելով նրան բազկաթոռին: — Ձեր գործը ես ոչ մի պայմանով ձեռքից բաց չեմ թողնի: Նա տառացիորեն թարմացնում է իմ հոգիս իր նորությամբ: Բայց և այնպես, ներեցեք ինձ, դրանում ինչ-որ զվարճալի բան կա: Իսկ ի՞նչ արեցիք, այս գրությունը դռան վրա գտնելով:

— Ես ցնցված էի, սըր: Չգիտեի, թե ինչ անեմ: Գնացի հարևան գրասենյակները, բայց ոչ ոք ոչինչ չգիտեր: Վերջապես, գնացի տանտիրոջ մոտ, որն ապրում էր ներքևի հարկում, և հարցրի, թե արդյոք չի՞ կարող ասել՝ ինչ է պատահել Կարմրահերների միությանը: Նա պատասխանեց, թե երբեք չի լսել այդպիսի կազմակերպության մասին: Այն ժամանակ ես հարցրի, թե ո՞վ էր միստր Դունկան Ռոսսը: Նա պատասխանեց, որ առաջին անգամ է լսում այդ անունը:

«Ես խոսում եմ այն ջենտլմենի մասին, որը վարձել էր ձեր համար չորս բնակարանը», — ասացի ես:

«Շիկակարմիր ջենթլմենի՞»:

— Այո:

«Նրա անունը Ուիլյամ Մորիս է: Նա իրավաբան է, շենքը վարձել էր ժամանակավորապես, որովհետև իր մշտական գրասենյակը վերանորոգման էր ենթարկվում: Նա երեկ մեկնեց»:

«Որտե՞ղ կարելի է գտնել նրան»:

«Իր մշտական գրասենյակում: Նա թողել է իր հասցեն: Ահա՝ Քինգ Էդուարդ-ստրիտ 17, Սենտ-Պոլ տաճարի մոտ»:

Ես գնացի այդ հասցեով, միստր Հոլմս, բայց պարզվեց, որ այնտեղ արհեստական ոտքերի արհեստանոց է. այդ արհեստանոցում ոչ ոք երբևէ չէր լսել ո՛չ միստր Ուիլյամ Մորիսի, ո՛չ էլ միստր Դունկան Ռոսսի մասին:

— Դրանից հետո ի՞նչ արեցիք, — հարցրեց Հոլմսը:

— Վերադարձա տուն՝ Սեքս-Կոբուրգ-սկվերի վրա և խորհուրդ արի օգնականիս հետ, որը ոչնչով չկարողացավ օգնել ինձ: Նա ասաց, որ պետք է սպասել, հավանորեն որևէ բան կհաղորդեն փոստով: Բայց դա ինձ չի գոհացնում, միստր Հոլմս: Այդպիսի հիանալի տեղը ես չեմ ուզում առանց կռվի զիջել, և քանի որ լսել էի, որ դուք խորհուրդներ եք տալիս խեղճ մարդկանց, որոնք դժվարին դրության մեջ են ընկել, ես էլ որոշեցի գալ ուղիղ ձեզ մոտ:

— Եվ ճիշտ եք վարվել, — ասաց Հոլմսը: — Ձեր դեպքը հիանալի դեպք է, և ես երջանիկ եմ, որ հնարավորություն ունեմ դրանով զբաղվելու: Լսելով ձեզ, ես գալիս եմ այն եզրակացության, որ այդ գործը շատ ավելի լուրջ է, քան երևում է առաջին հայացքից:

— Այն էլ ինչպե՜ս լուրջ, — ասաց միստր Ջեյբեզ Ուիլսնը: — Ես զրկվեցի շաբաթական չորս ֆունտից:

— Եթե խոսելու լինենք անձամբ ձեր մասին, — ասաց Հոլմսը, — ապա հազիվ թե դուք գանգատվելու պատճառ ունենաք այդ արտասավոր միությունից: Ընդհակառակը, որքան ես հասկանում եմ, նրա շնորհիվ դուք երեսուն ֆունտով ավելի հարստացաք, չխոսելով արդեն, որ խորը գիտելիքներ ձեռք բերեցիք «Ա» տառով սկսվող առարկաների մասին: Այնպես որ, ըստ էության, դուք ոչինչ չեք կորցրել:

— Չեմ վիճում, սըր, այդ այդպես է: Բայց ես կուզենայի, գտնել նրանց, իմանալ, թե ովքե՞ր են նրանք և ինչո՞ւ այդպիսի խաղ խաղացին իմ գլխին, եթե միայն դա խաղ էր: Այդ օյինբազությունը բավական թանկ նստեց նրանց վրա. դրա համար նրանք վճարեցին երեսուներկու ֆունտ ստեռլինգ:

— Մենք կփորձենք այդ բոլորը պարզել: Բայց թույլ տվեք նախ մի քանի հարց տալ ձեզ, միստր Ուիլսն: Վաղո՞ւց է ծառայում ձեզ մոտ այդ օգնականը... նա, որ հայտարարությունը ձեզ ցույց տվեց:

— Այն ժամանակ նա ինձ մոտ ծառայում էր արդեն մոտ մի ամիս:

— Դուք նրան որտե՞ղ գտաք:

— Նա ներկայացավ թերթում տված իմ հայտարարությամբ:

— Միայն նա՞ արձագանքեց ձեր հայտարարությանը:

— Ոչ, արձագանքեցին մոտ տասը մարդ:

— Ինչո՞ւ դուք հատկապես նրան ընտրեցիք:

— Որովհետև նա ժիր էր ու էժան:

— Ձեզ հրապուրեց նրան կես ռոճիկ վճարելու հնարավորությո՞ւնը:

— Այո:

— Ի՞նչ տեսք ունի նա, այդ Վինսենտ Սպոլդինգը:

— Պստլիկ, ամրակազմ, խիստ շարժուն: Երեսին ոչ մի մազ չունի, չնայած երեսունին մոտ է արդեն: Ճակատին մի սպիտակ խալ կա, որ առաջացել է թթվուտի այրումից:

Հոլմսը ուղղվեց տեղում: Նա շատ հուզված էր:

— Այդպես էլ գիտեի, — ասաց նա: — Իսկ դուք նրա ականջներին գինդի անցքեր չե՞ք նկատել:

— Նկատել եմ, սըր: Նա բացատրեց, որ երբ ինքը դեռ փոքր է եղել, ինչ-որ գնչուհի ծակել է նրա ականջները:

— Հը՛մ, — մռմռաց Հոլմսը և խոր մտքերի մեջ թաղված ետ ընկավ բազկաթոռի թիկնակին: — Նա մինչև հիմա ձեզ մո՞տ է:

— Այո՛, սըր, ես քիչ առաջ տեսա նրան:

— Երբ դուք տանը չէիք լինում, նա լա՞վ էր գլուխ հանում ձեր գործերից:

— Չեմ կարող գանգատվել, սըր: Ասենք, առավոտներն իմ փոխատու գանձարկղում համարյա անելիք չի լինում:

— Բավական է, միստր Ուիլսոն: Մեկ կամ երկու օր հետո ես կհայտնեմ ձեզ, թե ինչ եմ մտածում այդ դեպքի մասին: Այսօր շաբաթ է... Հուսով եմ, որ երկուշաբթի օրը մենք արդեն ամեն ինչ կիմանանք:

— Դե, Ուոթսն, ի՞նչ եք մտածում այս ամենի մասին, — հարցրեց Հոլմսը, երբ մեր այցելուն արդեն գնացել էր:

— Ոչինչ էլ չեմ մտածում, — անկեղծորեն պատասխանեցի ես: — Այդ գործն ինձ թվում է բոլորովին խորհրդավոր մի բան:

— Ընդհանուր կանոնն այս է, — ասաց Հոլմսը. — դեպքը որքան տարօրինակ է, այնքան քիչ խորհրդավորություն է պարունակում իր մեջ: Ամենից դժվարը հենց սովորական, անգույն հանցագործությունները մերկացնելն է, ինչպես որ բազմության մեջ ամենադժվարը սովորական դիմագծերով մարդուն գտնելն է: Բայց այս դեպքը պետք է որքան կարելի է շուտ վերջացնել:

— Ի՞նչ եք մտադիր անել:

Ծխել, — պատասխանեց նա: Այս խնդիրը ուղիղ երեք ծխամորճի համար է, և ես խնդրում եմ ձեզ մի տասը րոպե չխոսել ինձ հետ:

Նա կուչ եկավ բազկաթոռի մեջ, նիհար ծնկները բարձրացնելով դեպի բազեի քիթը, և երկար նստած մնաց այդ դիրքով, աչքերը փակ, առաջ տնկած կավե ծխամորճը, որը նման էր ինչ-որ տարօրինակ թռչնի կտուցի: Ես կարծեցի, թե նա քնեց, և ինքս էլ արդեն սկսում էի ննջել, երբ հանկարծ Հոլմսը վեր թռավ տեղից մի այնպիսի մարդու տեսքով, որը հաստատ որոշում է կայացրել, և ծխամորճը դրեց բուխարիկի վրա:

— Այսօր Սարասատեն նվագում է Սենթ-Ջեյմս-հոլլում, — ասաց նա: — Ի՞նչ եք մտածում այդ մասին, Ուոթսն: Ձեր հիվանդները մի քանի ժամով կարո՞ղ են յոլա գնալ առանց ձեզ:

— Ես այսօր ազատ եմ: Իմ պրակտիկան այնքան էլ շատ ժամանակ չի խլում ինձանից:

— Այդ դեպքում դրեք ձեր գլխարկը, գնանք: Ամենից առաջ ես ուզում եմ սիտիում լինել: Ճամփին որևէ տեղ մի բան կուտենք:

Մետրոյով գնացինք մինչև Օլդըրսհետ, այնտեղից քայլեցինք մինչև Սեքս-Կոբուրգ-սկվեր, ուր տեղի էին ունեցել այն բոլոր իրադարձությունները, որոնց մասին առավոտյան պատմել էին մեզ:

Սեքս-Կոբուրգ-սկվերը մի փոքրիկ, քնկոտ հրապարակ է, արիստոկրատական երևալու ողորմելի ջանքերով: Չորս շարք աղյուսե երկհարկանի կեղտոտ տներ իրենց լուսամուտներով նայում են մի պստլիկ, մոլախոտերով ծածկված այգու, ուր մի քանի թոշնած դափնեթփեր ծանր պայքարի մեջ էին մտել մրով հագեցած օդի հետ: Երեք ոսկեզօծ գնդեր և անկյունում կախված կինամոնագույն մի ցուցանակ՝ «Ջեյբեզ Ուիլսն» մակագրությամբ ցույց էին տալիս, որ այստեղ է գտնվում մեր շիկակարմիր այցելուի ձեռնարկությունը:

Շերլոկ Հոլմսը կանգ առավ դռան մոտ, կիսափակ կոպերի տակից նրա վրա հառելով փայլուն աչքերը: Հետո նա դանդաղաքայլ անցավ փողոցով, վերադարձավ անկյուն, ուշադիր զննելով շենքերը: Փոխատու գանձարկղի առաջ նա մի երեք անգամ ձեռնափայտով ուժգին հարվածեց սալարկին, ապա մոտեցավ դռանն ու ծեծեց: Դուռն անմիջապես լայնորեն բացեց արագաշարժ, մաքուր ածիլված մի երիտասարդ և մեզ ներս հրավիրեց:

— Շնորհակալություն, — ասաց Հոլմսը: — Ես ուզում էի միայն հարցնել, թե այստեղից ինչպե՞ս գնալ Ստրենդ:

— Երրորդ դարձումը դեպի աջ, չորրորդը՝ դեպի ձախ, — վայրկենապես պատասխանեց միստր Ուիլսնի օգնականը և դուռը շրխկոցով փակեց:

— Ճարպի՜կն է, — նկատեց Հոլմսը, երբ մենք նորից քայլում էինք փողոցով: — Կարծում եմ, որ նա ճարպկության տեսակետից չորրորդ տեղն է գրավում Լոնդոնում, իսկ քաջության տեսակետից, թերևս նույնիսկ երրորդը: Ես նրա մասին շատ բաներ գիտեմ:

— Ինչպես երևում է, — ասացի ես, — միստր Ուիլսնի օգնականը փոքր դեր չի խաղում այս Կարմրահերների միությունում: Համոզված եմ, որ դուք ճանապարհը հարցրիք միայն նրա համար, որպեսզի տեսնեք նրան:

— Ոչ թե նրան:

— Հապա ի՞նչը:

— Նրա ծնկները:

— Եվ ի՞նչ տեսաք:

— Այն, ինչ սպասում էի:

— Իսկ ինչո՞ւ էիք թակում սալարկը:

— Սիրելի դոկտոր, այժմ դիտելու ժամանակ է և ոչ թե խոսակցության: Մենք հետախույզներ ենք հակառակորդի ճամբարում: Մեզ հաջողվեց որոշ բան իմանալ Սեքս-Կոբուրգ-սկվերի մասին: Հիմա հետախուզենք այն փողոցները, որոնք հարում են նրան մյուս կողմից:

Մենք շուռ եկանք փողոցի անկյունը: Տարբերությունը Սեքս-Կոբուրգ-սկվերի և մեր տեսածի միջև նույնքան մեծ էր, որքան մեծ է նկարի և նրա հակառակ երեսի միջև եղած տարբերությունը:

Այդտեղով անցնում էր քաղաքի գլխավոր զարկերակներից մեկը, որը Սիտին միացնում է հյուսիսի ու արևմուտքի հետ: Այդ մեծ փողոցն ամբողջովին լցված էր աջ ու ձախ հոսող կառքերի հեղեղով, իսկ մայթերի վրա սևին էին տալիս հետիոտնների պարսերը: Նայելով հիանալի խանութների ու շքեղ գրասենյակների շարքերին, դժվար էր պատկերացնել, որ այդ նույն տների ետևում գտնվում է այնպիսի մի աղքատիկ ամայի հրապարակ:

— Թույլ տվեք մի լավ դիտեմ, — ասաց Հոլմսը, կանգ առնելով անկյունում և իրար ետևից ուշադիր զննելով տները: — Ուզում եմ շենքերի հերթականությունը հիշել: Լոնդոնի ուսումնասիրումն իմ կիրքն է... Ամենից առաջ Մորտիմերի ծխախոտի խանութն է, հետո՝ թերթի կիոսկը, հետո՝ Քաղաքային և Մերձքաղաքային բանկի Կոբուրգի բաժանմունքը, այնուհետև՝ բուսակերների ռեստորանը, ապա՝ Մակ-Ֆեռլենի ծածկակառքերի դեպոն: Հետո արդեն գալիս է ուրիշ թաղամաս... Դե, դոկտոր, մեր աշխատանքը ավարտված է: Հիմա կարող ենք մի քիչ զվարճանալ՝ բուտերբրոդ, մի բաժակ սուրճ և ապա՝ դեպի ջութակների աշխարհը, ուր ամեն ինչ քաղցրություն է, գրգանք ու հարմոնիա, ուր չկան շիկակարմիր այցելուներ, որոնք վրդովում են մեզ դժվարին հանելուկներով:

Իմ բարեկամը կրքոտությամբ հրապուրվում էր երաժշտությամբ. նա ոչ միայն ընդունակ կատարող էր, այլև երևելի կոմպոզիտոր: Ամբողջ երեկոն նա նստեց բազկաթոռին, լիովին երջանիկ, երաժշտության տակտի հետ թեթևակի շարժելով երկար ու բարակ մատները: Նրա մեղմորեն ժպտացող դեմքը, խոնավ, մշուշված աչքերը ոչնչով չէին հիշեցնում Հոլմս-խուզարկուին, խորամանկ, դաժան Հոլմսին, բանդիտներին հետապնդողին: Նրա զարմանալի բնավորությունը բաղկացած էր երկու տարերքից: Հաճախ մտածում էի, որ նրա՝ իր ճշգրտությամբ ապշեցնող խորաթափանցությունը ծնվել է այդ մարդու բնավորության հիմնական գիծը կազմող պոետական մտախոհության դեմ վարած պայքարում: Նա շարունակ լիակատար թուլությունից անցնում էր արտասովոր էներգիայի: Ինձ լավ հայտնի էր, թե նա ինչպիսի անհոգ հանգստությամբ երեկոներն անձնատուր էր լինում իր իմպրովիզացիաներին ու նոտաներին: Բայց հանկարծ որսորդական կիրքը համակում էր նրան, իրեն հատուկ մտածողության փայլուն ուժը աճում, հասնում էր ներհայեցողության աստիճանի և նրանք, ովքեր ծանոթ չէին նրա մեթոդին, սկսում էին մտածել, որ մարդ չի կանգնած իրենց առաջ, այլ ինչ-որ գերբնական արարած: Հետևելով նրան Սենթ-Ջեյմս-հոլլում և տեսնելով, թե նրա հոգին ինչպիսի լիությամբ է տրվում երաժշտության, ես զգում էի, որ վատ է լինելու այն մարդու բանը, որին նա ուզում է որսալ:

— Դոկտոր, դուք, իհարկե, ուզում եք տուն գնալ, — ասաց նա համերգը վերջանալուց հետո:

— Հասկանալի է, տուն:

— Իսկ ես դեռ մի գործ էլ ունեմ, որն ինձանից կխլի երեք-չորս ժամ: Կոբուրգ-սկվերի այդ դեպքը շատ լուրջ բան է:

— Իսկապե՞ս:

— Այնտեղ ոճրագործություն է պատրաստվում: Ես բոլոր հիմքերն ունեմ մտածելու, որ դեռ կարող ենք կանխել այն: Բայց ամեն ինչ բարդանում է նրանով, որ այսօր շաբաթ է: Երեկոյան ես կարող եմ ձեր օգնության կարիքն զգալ:

— Ո՞ր ժամին:

— Ժամը տասին, ոչ շուտ:

— Ուղիղ տասին կլինեմ Բեյքր-ստրիտում:

— Շատ լավ: Ի նկատի ունեցեք, դոկտոր, որ գործը վտանգավոր է լինելու: Ձեր զինվորական ատրճանակը վերցրեք հետներդ:

Նա ձեռքով արավ ինձ, արագ շուռ եկավ և իսկույն անհետացավ բազմության մեջ:

Ես ինձ ուրիշներից հիմար չեմ համարում, բայց ամեն անգամ Շերլոկ Հոլմսի հետ գործ ունենալիս սեփական բթամտության գիտակցությունը տանջում է ինձ: Ահա, ես էլ լսեցի նույնը, ինչ նա, տեսա նույնը, ինչ նա, սակայն, դատելով նրա խոսքերից, նա գիտե և հասկանում է ոչ միայն այն, ինչ պատահել է, այլև այն, ինչ պատահելու է: Իսկ ինձ այդ ամբողջ գործը պատկերանում է իբրև անհասկանալի անհեթեթություն:

Տուն վերադառնալիս նորից հիշեցի և՛ «Բրիտանական հանրագիտարանի» շիկակարմիր արտագրողի ողջ անսովոր պատմությունը, և՛ մեր այցելությունը Սեքս-Կոբուրգ-սկվեր, և՛ այն չարագուշակ խոսքերը, որ ասաց ինձ Հոլմսը հրաժեշտ տալիս: Ի՞նչ է նշանակում այդ գիշերային էքսպեդիցիան և ինչո՞ւ համար պետք է ես զինված գնամ: Ո՞ւր ենք գնալու և ի՞նչ պիտի անենք: Հոլմսը ակնարկեց, որ փոխատու գանձարկղի տիրոջ անմորուք օգնականը խիստ վտանգավոր մարդ է, ընդունակ մեծ հանցագործությունների:

Ամեն կերպ աշխատում էի լուծել այդ հանելուկը, բայց ոչինչ դուրս չեկավ: Որոշեցի սպասել գիշերվան, որը պետք է ամեն բան պարզեր:

Տասից քառորդ պակաս դուրս եկա տնից և, անցնելով Հայդ-պարկն ու Օքսվորդ-ստրիտը, դուրս եկա Բեյքր-ստրիտ: Մուտքի մոտ կանգնած էին երկու կեբ: Նախասենյակ մտնելով, լսեցի ձայների աղմուկ: Հոլմսի մոտ երկու մարդ գտա, որոնց հետ նա աշխույժ զրույցի էր բռնված: Մեկին ճանաչում էի. դա Պիտր Ջոնսն էր, ոստիկանության պաշտոնական գործակալը: Մյուսը բարձրահասակ, նիհար, մռայլ մի մարդ էր՝ գլխին փայլուն ցիլինդր, հագին ճնշող անբասիր ֆրակ:

— Ահա և մենք հավաքվեցինք, — ասաց Հոլմսը, նավաստիական կուրտկան կոճկելով ու թարեքից վերցնելով ծանրակոթ որսորդական մտրակը: — Ուոթսն, դուք կարծեմ ծանոթ եք Սկոտլանդ-Յարդի գործակալ միստր Ջոնսին: Թույլ տվեք ձեզ ներկայացնել միստր Մերրիուեզերին: Միստր Մերրիուեզերը նույնպես մասնակցելու է մեր գիշերային արկածին:

— Ինչպես տեսնում եք, դոկտոր, մենք միստր Հոլմսի հետ նորից միասին ենք որսի դուրս գալիս, — ասաց Ջոնսը իր սովորական մեծալուրջ ու ներողամիտ տեսքով: — Մեր բարեկամը աննման մարդ է: Բայց որսի հենց սկզբում գազանին հետապնդելու համար նրան հարկավոր է քերծեիս օգնությունը:

— Վախենում եմ ոչ թե գազան սպանենք, այլ բադ, — մռայլ տեսքով ասաց միստր Մերրիուեզերը:

— Սըր, կարող եք լիովին վստահել միստր Հոլմսին, — հովանավորող տոնով խոսեց ոստիկանության գործակալը: — Նա ունի իր սեփական սիրած մեթոդները, որոնք, թույլ եմ տալիս ինձ նկատելու, մի փոքր վերացական են ու ֆանտաստիկ, բայց և այնպես հիանալի արդյունքներ են տալիս: Պետք է խոստովանել, որ եղել են դեպքեր, երբ նա իրավացի է դուրս եկել, իսկ պաշտոնական ոստիկանությունը սխալվել է:

— Քանի որ դուք այդպես եք ասում, միստր Ջոնս, ուրեմն ամեն ինչ կարգին է, — ներողամտորեն ասաց անծանոթը: — Բայց և այնպես ցավում եմ, որ այսօր իմ սովորական ռոբբերը չեմ խաղալու: Քսանյոթ տարվա ընթացքում սա առաջին շաբաթ երեկոն է, որ ես անց եմ կացնելու առանց թղթախաղի:

— Այսօրվա խաղում խաղչեքը շատ ավելի խոշոր է լինելու, քան ձեր թղթախաղերում, — ասաց Շերլոկ Հոլմսը, — և ինքը խաղն էլ ավելի հրապուրիչ է: Միստր Մերրիուեզեր, ձեր խաղաչեքը հավասար է երեսուն հազար ֆունտ ստեռլինգի: Իսկ ձեր խաղաչեքը, Ջոնս, այն մարդն է, որին վաղուց ի վեր ուզում եք բռնել:

— Ջոն Քլեյը մարդասպան է, գող ու սրիկա, — ասաց Ջոնսը: — Նա դեռ ջահել է, միստր Մերրիուեզեր, բայց դա ամենահմուտ գողն է երկրում: Ոչ ոքի ձեռքերին ես այնպիսի հաճույքով

ձեռնաշղթա չէի անցկացնի, ինչպես նրա: Հիանալի մարդ է նա, այդ պատանի Ջոն Քլեյը: Նրա պապը հերցոգ էր, նա ինքը սովորել է Իթոնում և Օքսվորդում, նրա ուղեղը նույնքան մարզված է, որքան ձեռքերը: Չնայած մենք յուրաքանչյուր քայլափոխի հանդիպում ենք նրա հետքերին, բայց նա մինչև հիմա անորսալի է մնացել: Այս շաբաթվա մեջ նա կողոպտում է որևէ մեկին Շոտլանդիայում, իսկ մյուս շաբաթ արդեն փող է հանգանակում Կոռնվալիսում մանկատուն կառուցելու համար: Ես մի քանի տարի է, ինչ հետապնդում եմ նրան, բայց դեռ ոչ մի անգամ իրեն չեմ տեսել:

— Այս գիշեր ես բավականությամբ նրան ձեզ կներկայացնեմ: Ինքս էլ մի երկու անգամ առիթ եմ ունեցել դեմ առնելու միստր Ջոն Քլեյի սխրագործություններին և լիովին համամիտ եմ ձեզ հետ, որ նա ամենահմուտ գողն է երկրում... Արդեն ժամը տասնմեկն է, շարժվելու ժամանակը: Դուք երկուսդ գնացեք առաջին կեբով, իսկ ես և Ուոթսնը կգանք երկրորդով:

Մեր երկար ուղևորության ընթացքում Շերլոկ Հոլմսն այնքան էլ մարդամոտ չէր: Նա ետ էր ընկել նստարանին և սուլում էր այդ օրը համերգում լսած եղանակները: Մենք անցանք գազով լուսավորված անհամար խառնաշփոթ փողոցների միջով, մինչև որ վերջապես հասանք Ֆարրինգտոն-ստրիտ:

— Հիմա մենք բոլորովին մոտիկ ենք, — ասաց բարեկամս: — Այդ Մերրիուեզերը բանկի դիրեկտորն է և անձամբ շահագրգռված ամբողջ գործի մեջ: Ջոնսն էլ պետք կգա: Նա պատվական մարդ է, չնայած իր պրոֆեսիայից բան չի հասկանում: Սակայն նա ունի մի անժխտելի արժանիք՝ խիզած է, ինչպես բուլդոգ, և կառչուն, ինչպես խեցգետին: Եթե մեկնումեկին բռնեց իր չանչով, այլևս բաց չի թողնի... Հասանք: Ահա և նրանք:

Մենք նորից կանգ առանք այն մարդաշատ ու եռուն փողոցում, ուր եղել էինք առավոտյան: Վճարելով կառապաններին և միստր Մերրիուեզերին հետևելով, մտանք ինչ-որ նեղ միջանցք և ներս ընկանք կողքի դռնից, որ նա բաց արավ մեզ համար: Դռան ետևում մի ուրիշ, ավելի կարճ միջանցք կար, որը վերջանում էր ծանր երկաթե դռներով: Այդ դռները բաց անելով, պտուտակաձև սանդուղքի քարե աստիճաններով ցած իջանք ու մոտեցանք մի նոր, նույնքան ծանրաշարժ դռան: Միստր Մերրիուեզերը կանգ առավ, որպեսզի լամպը վառի, և առաջնորդեց մեզ մութ, հողի հոտ արձակող միջանցքով: Անցնելով մի դուռ ևս, մենք հայտնվեցինք մի ընդարձակ դամբարանում կամ նկուղում, որը լի էր զամբյուղներով ու ծանր արկղերով:

— Վերևից այստեղ թափանցելն այնքան էլ հեշտ չէ, — նկատեց Հոլմսը, բարձրացնելով լամպը և առաստաղը զննելով:

— Ներքևից նույնպես, — ասաց միստր Մերրիուեզերը, ձեռնափայտը թխկացնելով սալերին, որոնցով ծածկված էր հատակը: — Սատանան տանի, այնպիսի ձայն է արձակում, ասես այնտեղ դատարկություն է, — զարմանքով բացականչեց նա:

— Ես պետք է խնդրեմ ձեզ չաղմկել, — բարկությամբ ասաց Հոլմսը: — Ձեր պատճառով մեր ամբողջ էքսպեդիցիան կարող է ձախողվել: Բարի եղեք նստել այդ արկղերից մեկի վրա և չխանգարել:

Մեծալուրջ միստր Մերրիուեզերը վիրավորված տեսքով նստեց մի զամբյուղի վրա, իսկ Հոլմսը չոքեց ու սկսեց լամպի ու խոշորացույցի օգնությամբ ուսումնասիրել սալերի միջև եղած ճեղքերը: Մի քանի վայրկյան հետո, գոհ իր հետազոտության արդյունքներից, նա վեր կացավ ու խոշորացույցը դրեց գրպանը:

— Մենք դեռ ամենաքիչը մի ժամ ժամանակ ունենք, — նկատեց նա: — Հազիվ թե նրանք գործի անցնեն նախքան փոխատու գանձարկղի հարգարժան տիրոջ քնելը: Իսկ երբ նա քնի, նրանք ոչ մի րոպե չեն կորցնի, որովհետև որքան շուտ ավարտեն աշխատանքը, այնքան շատ ժամանակ կունենան փախուստի համար... Դոկտոր, մենք գտնվում ենք, — ինչպես դուք, անկասկած, արդեն գլխի եք ընկնում, — Լոնդոնի ամենահարուստ բանկերից մեկի մառանում: Միստր Մերրիուեզերը

այդ բանկի վարչության նախագահն է. նա մեզ կբացատրի, թե ինչն է ամենահանդուգն հանցագործներին ստիպում հենց այս ժամին հատուկ ուշադրություն դարձնել այս մառանին:

— Մենք այստեղ պահում ենք մեր ֆրանսիական ոսկին, — շշուկով ասաց դիրեկտորը: — Արդեն ունեցել ենք մի շարք նախազգուշացումներ, որ այն հափշտակելու փորձ է նախապատրաստվում:

— Ձեր ֆրանսիական ոսկի՞ն:

— Այո՛: Մի քանի ամիս առաջ ավելորդ միջոցներ էին հարկավոր մեզ, և մենք ֆրանսիական բանկից պարտք վերցրինք երեսուն հազար նապոլեոնդոր: Հետագայում պարզվեց, որ կարիք չունենք այդ փողերը նույնիսկ բաց անելու, և նրանք մինչև այժմ մնում են մեր մառանում: Այն զամբյուղը, որի վրա ես նստած եմ, պարունակում է երկու հազար նապոլեոնդոր՝ դարսված արճճե թղթերի միջև: Հազվադեպ է պատահում, որ բանկի մեկ բաժանմունքում այնքան ոսկի պահեն, որքան ներկայումս պահվում է մեզ մոտ, և դա հարկադրում է դիրեկտորին անհանգստանալ:

— Նրանք բոլոր հիմքերն ունեն անհանգստանալու, — նկատեց Հոլմսը: — Դե, պատրաստվելու ժամանակն է: Կարծում եմ, որ առաջիկա մի ժամվա ընթացքում ամեն ինչ վերջացած կլինի: Միստր Մերրիուեզեր, անհրաժեշտ է այդ լապտերը ծածկել որևէ սև բանով...

— Ու նստել մթության մե՞ջ:

— Վախենամ, որ այո: Ես մի ձեռք թուղթ էի վերցրել հետս, որպեսզի դուք կարողանաք ռոբբերի ձեր պարտիան խաղալ, քանի որ մենք այստեղ չորս հոգով ենք: Բայց տեսնում եմ, որ թշնամու նախապատրաստությունները խիստ հեռու են գնացել, և այստեղ լույս թողնելը վտանգավոր բան կլիներ: Բացի դրանից, մենք պետք է տեղներս փոխենք: Նրանք համարձակ մարդիկ են և, չնայած մենք անակնկալ ենք հարձակվելու, այնուամենայնիվ, կարող են մեծ վնաս պատճառել, եթե զգույշ չլինենք: Ես կթաքնվեմ այս զամբյուղի ետևը, իսկ դուք՝ այն մյուսների: Երբ ես լույսը կուղղեմ գողերի վրա, դուք բռնեցեք նրանց: Եթե կսկսեն կրակել, Ուոթսն, առանց տատանվելու կրակ բացեք նրանց վրա:

Ես իմ լցված ատրճանակը դրի տախտակե արկղի կափարիչին, իսկ ինքս թաքնվեցի արկղի ետևում: Հոլմսը փակեց լապտերի դռնակը, մեզ թողնելով անթափանց խավարի մեջ: Տաքացած մետաղի հոտը հիշեցնում էր, որ լամպը հանգցված չէ և ամեն ակնթարթ լույսը կարող է բռնկվել: Սպասումից լարված ջղերս ճնշված էին այդ անակնկալ խավարից, նկուղի պաղ խոնավությունից:

— Նրանք փախուստի միայն մի ճանապարհ ունեն՝ ետ, դեպի Սեքս-Կոբուրգ-սկվերի վրա գտնվող տունը, — շշնջաց Հոլմսը: — Հուսով եմ, Ջոնս, դուք արել եք այն, ինչ խնդրել էի:

— Տեսուչը և երկու սպա սպասում են նրանց շքամուտքի մոտ:

— Ուրեմն, բոլոր անցքերը փակել ենք: Հիմա մեզ մնում է միայն լռել ու սպասել:

Ի՜նչ դանդաղ էր անցնում ժամանակը: Ըստ էության անցել էր ընդամենը մեկ ժամ տասնհինգ րոպե, բայց ինձ թվում էր, թե գիշերն արդեն վերջացել է և վերևում լուսաբաց է: Ոտքերս թմրել ու հոգնել էին, որովհետև վախենում էի շարժվել. ջղերս լարվել էին: Եվ հանկարծ ներքևում նկատեցի լույսի մի ցոլք:

Սկզբում դա մի աղոտ կայծ էր, որ լուսավորեց հատակի քարերից մեկը: Շուտով այդ կայծը վերածվեց դեղին շերտի: Հետո հատակի մեջ անաղմուկ մի անցք առաջացավ, և լուսավորված տարածության մեջտեղում հայտնվեց մի ձեռք՝ սպիտակ, կանացի մի ձեռք, որն ասես փորձում էր շոշափել ինչ-որ առարկա: Մոտ մի րոպե շարժվող մատներով այդ ձեռքը դուրս էր ցցվել անցքի միջից: Հետո նա չքացավ նույնքան անակնկալ, ինչպես որ հայտնվել էր, և նորից ամեն ինչ թաղվեց խավարում. միայն երկու սալերի միջև եղած բարակ ճեղքից մի թույլ լույս էր թափանցում:

Սակայն, մի վայրկյան հետո լայն, սպիտակ սալերից մեկը սուր ճռնչյունով շուռ եկավ, և նրա տեղում բացվեց քառակուսի խոր մի փոս, որտեղից դուրս հորդեց լամպի լույսը: Փոսից հայտնվեց մաքուր սափրված տղայական մի գլուխ. անծանոթն ուշադիր նայեց չորս կողմը, երկու ձեռքեր հենվեցին բացվածքի եզրերին. փոսից վեր բարձրացան նախ ուսերը, ապա ամբողջ իրանը, ծունկը հենվեց հատակին: Քիչ հետո անծանոթն արդեն ողջ հասակով կանգնած էր փոսի եզրին և օգնում էր վեր բարձրանալու իր ընկերոջը, իր պես փոքրիկ ու ճկուն, գունատ դեմքով, վառ շիկակարմիր գանգուրներով մի մարդու:

— Ամեն ինչ կարգին է, — շշնջաց նա: — Պարկերն ու դուրը քեզ մո՞տ են... Գրո՛ղը տանի... Թռի՛ր, Արչի, թռի՛ր, իսկ ես իմ գլուխը կազատեմ:

Շերլոկ Հոլմսը բռնեց նրա օձիքից: Երկրորդ գողը ծլկեց անցքի մեջ: Ջոնսը փորձեց բռնել նրան, բայց, ինչպես երևում է անհաջող. ես լսեցի պատռվող շորի ձայնը: Լույսը փայլկտաց ատրճանակի փողին, բայց Հոլմսը որսորդական մտրակով շրխկացրեց իր գերու ձեռքին, և ատրճանակը զնգոցով ընկավ քարե հատակի վրա:

— Իզուր է, Ջոն Քլեյ, — ասաց Շերլոկ Հոլմսը մեղմությամբ: — Բռնվեցիք:

— Տեսնում եմ, — միանգամայն հանգիստ պատասխանեց նա: — Բայց ընկերոջս հաջողվեց դուրս պրծնել. միայն նրա պիջակի փեշը մնաց ձեր ձեռքում:

— Դռների ետևում երեք մարդ սպասում են նրան, — ասաց Հոլմսը:

— Ա՛խ, ահա թե ի՞նչ: Մաքուր գործ է: Շնորհավորում եմ ձեզ:

— Ես էլ ձեզ: Կարմրահերների մասին ձեր հնարքը միանգամայն օրիգինալ էր և հաջող:

— Հիմա դուք կտեսնեք ձեր բարեկամին, — ասաց Ջոնսը: — Նա ինձանից էլ արագ է կարողանում ծլկել անցքի մեջ: Իսկ այժմ ես ձեռնաշղթաներ կանցկացնեմ ձեր ձեռքերին:

— Խնդրեմ, հեռու տարեք ձեր կեղտոտ ձեռքերը: Չդիպչե՛ք ինձ, — ասաց մեր գերին, երբ ձեռնաշղթաներն արդեն անցկացված էին: — Թերևս ձեզ հայտնի է, որ իմ մեջ արքայական արյուն է հոսում: Ուրեմն, բարի եղեք ինձ դիմելիս անվանել «սըր» և ասել «խնդրում եմ»:

— Շատ բարի, — ասաց Ջոնսը քմծիծաղով: — Սըր, խնդրում եմ, բարձրացեք վերև և բարեհաճեցեք նստել կեբ, որը ձերդ պայծառափայլությանը կտանի ոստիկանատուն:

— Ահա, այդպես ավելի լավ է, — հանգիստ ասաց Ջոն Քլեյը:

Վեհապանծորեն գլխով անելով մեզ, նա անխռով հեռացավ խուզարկուի հսկողությամբ:

— Միստր Հոլմս, — ասաց Մերրիուեզերը, դուրս բերելով մեզ նկուղից, — իսկապես չգիտեմ, թե մեր բանկն ինչպես կարող է շնորհակալություն հայտնել ձեզ այս ծառայության համար: Ձեզ հաջողվեց կանխել մեծագույն կողոպուտը:

— Ես իմ սեփական հաշիվներն ունեի միստր Ջոն Քլեյի հետ, — ասաց Հոլմսը: — Այսօրվա գործում իմ ծախքերը մեծ չեն, և ձեր բանկն անշուշտ, կհատուցի դրանք, չնայած ըստ էության ես արդեն վարձատրված եմ նրանով, որ ապրեցի իր տեսակի մեջ եզակի այս արկածը և լսեցի Կարմրահերների միության հիանալի պատմությունը...

— Հասկանում եք, Ուոթսն, — վաղ առավոտյան բացատրում էր ինձ Շերլոկ Հոլմսը, երբ մենք նստել էինք Բեյքր-ստրիտում և մի-մի բաժակ սոդայախառն վիսկի էինք խմում, — ինձ համար

սկզբից ի վեր պարզ էր, որ Կարմրահերների միության մասին այդ ֆանտաստիկ հայտարարության և «Բրիտանական հանրագիտարանն» արտագրելու միակ նպատակը կարող էր լինել փոխատու գանձարկղի ոչ այնքան խելոք տիրոջը ամեն օր իր տնից մի քանի ժամով հեռացնելու ցանկությունը: Նրանց ընտրած միջոցն, իհարկե, տարօրինակ է, սակայն դրա շնորհիվ նրանք լիովին հասան իրենց նպատակին: Անկասկած, այդ ամբողջ պլանը Քլեյի ներշնչվող մտքին հուշել է իր գործակցի մազերի գույնը: Շաբաթական չորս ֆունտը ծառայում էր իբրև խայծ Ուիլսնի համար: Իսկ ի՞նչ նշանակություն ուներ նրանց համար չորս ֆունտը, երբ հույս ունեին հազարներ ստանալ: Նրանք հայտարարություն զետեղեցին թերթում. մի սրիկան ժամանակավորապես գրասենյակ վարձեց, մյուսն իր տիրոջը համոզեց գնալ այնտեղ, և երկուսն էլ հնարավորություն ստացան ամեն առավոտ օգտվել նրա բացակայությունից: Երբ ես լսեցի, թե օգնականը գոհանում է կես ռոճիկով, հասկացա, որ նա հիմնավոր պատճառներ ունի դրա համար:

— Բայց ինչպե՞ս բաց արիք նրանց մտադրությունը:

— Մեր շիկակարմիր այցելուի ձեռնարկությունը մի չնչին բան է, նրա ողջ բնակարանում չկա մի իր, որի համար արժեևար այդքան բարդ խաղ սկսել: Հետևաբար, նրանք ի նկատի ունեին բնակարանից դուրս գտնվող ինչ-որ բան: Ի՞նչ կարող էր լիներ այդ: Հիշեցի օգնականի լուսանկարչական մոլությունը, այն, որ նա օգտվում է դրանից, որպեսզի մտնի նկուղ: Նկո՛ւղը... Ահա խճճված թելի մյուս ծայրը: Ուիլսնին մանրամասն հարցուփորձ արի այդ հանելուկային օգնականի մասին և հասկացա, որ գործ ունեմ Լոնդոնի ամենասառնարյուն ու հանդուգն ոճրագործներից մեկի հետ: Նա ինչ-որ բան է անում նկուղում, ինչ-որ բարդ բան, քանի որ ամեն օր մի քանի ժամ շարունակ աշխատում է այնտեղ, և այն էլ երկու ամսվա ընթացքում: Ի՞նչ կարող է անել: Միայն մի բան՝ ստորերկրյա անցք փորել, որը տանում է դեպի մի որևէ այլ շենք: Գալով այդ եզրակացության, ես վերցրի ձեզ ու գնացի ծանոթանալու այն տեղին, ուր կատարվում էր այդ բոլորը: Դուք շատ զարմացաք, երբ ձեռնափայտով թխկացրի սալարկին: Մինչդեռ ես ուզում էի իմանալ՝ ստորերկրյա անցքը ո՛ր կողմն է ձգվում՝ ճակատի՞, թե բակի: Պարզվեց, որ ճակատի կողմը չէ: Զանգահարեցի: Ինչպես և սպասում էի, դուռը բացեց օգնականը: Ես նրա հետ որոշ ընդհարումներ ունեցել էի արդեն, բայց մենք երբեք իրար դեմքով չէինք տեսել: Ասենք, այս անգամ էլ ես նրա դեմքին չնայեցի: Ուզում էի տեսնել նրա ծնկները: Դուք ինքներդ էլ կարող էիք նկատել, թե այդ ծնկները որքան կեղտոտ էին, ճմռթված ու տրորված: Դրանք վկայում էին շատ ու շատ ժամեր ստորերկրյա անցքը փորելու մասին: Մնում էր միայն պարզել, թե ո՞ւր է տանում այդ անցքը: Ես շուռ եկա փողոցի անկյունը, նկատեցի Քաղաքային և Մերձքաղաքային բանկի ցուցանակը և հասկացա, որ խնդիրը լուծված է: Երբ համերգից հետո դուք տուն գնացիք, ես ուղղվեցի դեպի Սկոտլանդ-Յարդ, իսկ այնտեղից՝ բանկի վարչության նախագահի մոտ:

— Իսկ ինչպե՞ս իմացաք, որ նրանք կփորձեին հատկապես այդ գիշեր կատարել կողոպուտը, — հարցրի ես:

— Փակելով Կարմրահերների միությունը, նրանք դրանով իսկ հասկացնում էին, որ այլևս միստր Ջեյբեզ Ուիլսնի բացակայության կարիքը չեն զգում. այլ կերպ ասած, անցքը պատրաստ է: Պարզ էր, որ նրանք կաշխատեին որքան կարելի է շուտ օգտվել դրանից, քանի որ՝ առաջին, անցքը կարող էր նկատվել, իսկ երկրորդ, ոսկին կարող էր ուրիշ տեղ տեղափոխվել: Շաբաթ օրը հատկապես հարմար էր, որովհետև դա ավելորդ մի օր էր տրամադրում նրանց փախուստի համար: Այս բոլոր նկատառումների հիման վրա ես եկա այն եզրակացության, որ կողոպուտի փորձը կկատարվի մոտակա գիշերը:

— Ձեր դատողությունները հիանալի են, — բացականչեցի ես անկեղծ հիացմունքով: — Դուք մի այնպիսի երկար շղթա եք ստեղծել, որի ամեն մի օղակն անթերի է:

— Այս դեպքն ազատեց ինձ ճնշող ձանձրույթից, — հորանջելով խոսեց Շերլոկ Հոլմսը: — Ավա՜ղ, ես զգում եմ, որ ձանձրույթը նորից սկսում է հաղթահարել ինձ: Իմ ամբողջ կյանքը՝ մեր առօրյա կյանքի տաղտկալի միօրինակությունից խույս տալու համատարած մի ջանք է: Այն փոքրիկ հանելուկները, որ ես երբեմն լուծում եմ, օգնում են ինձ այդ նպատակին հասնելու:

— Դուք մարդկության իսկական բարերար եք, — ասացի ես:

Հոլմսը ուսերը թոթվեց:

— Միգուցե ես իրոք օգուտ տալիս եմ: «L' homme c'est rien-l' oeuvre c' est tout», ինչպես ասել է Գյուստավ Ֆլոբերը Ժորժ Սանդին գրած նամակում: